ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0012, ք. Երևան, Վ. Վաղարշյան 13ա, հեռ.(փաքս)՝ 011 90 00 02

№ 18-183/ԵՖ-14

«02» 12 2014 թ.

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակի նախագահ
Ա.Սաքունցին

Հարգելի պարոն Սաքունց,

Ուղարկում եմ 10.11.2014թ. ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված Ձեր դիմումի և Արմեն Ջիվանի Շամիրյանի հաղորդման հիման վրա ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով քրեական գործ հարուցելու և այն վարույթ ընդունելու մասին որոշումը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով,

ՀՀ հատուկ քննչական ծառայության
հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ՝ ***Գ.Վ.Բեգոյան***

Հեռ. 011-900-048

62229414
18-483կգ-14

ՈՐՈՇՈՒՄ
քրեական գործ հարուցելու և այն վարույթ ընդունելու մասին

01 դեկտեմբերի, 2014թ. ք.Երևան

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Գ.Վ.Բեգոյանս, ուսումնասիրելով Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի գրության և Արմեն Ջիվանի Շամիրյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

2014թ. նոյեմբերի 25-ին ՀՀ գլխավոր դատախազության միջոցով ստացվել է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի գրությունն այն մասին, որ իրեն է դիմել «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի դատապարտյալ Արմեն Ջիվանի Շամիրյանը՝ հայտնելով, որ «Հրազդան» ՔԿ հիմնարկում պատիժը կրելու ընթացքում՝ 2014թ. փետրվար կամ մարտ ամսից սկսած նույն հիմնարկի պետի տեղակալի հետ համաձայնության գալուց հետո իր հարազատների օգնությամբ տարբեր անձանցից գնել ու հանձնուքի միջոցով ՔԿ հիմնարկ է մտցրել տարբեր մոդելի ու արժեքի մոտ երկու հարյուր բջջային հեռախոսներ: Դրանք վաճառել է տարբեր դատապարտյալների, իսկ ստացված շահույթի մի մասն էլ տվել է ՔԿ հիմնարկի պետի տեղակալին: Միմյանց միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն նշված պաշտոնատար անձը, ապահովելով հեռախոսների անարգել մուտքը հիմնարկ, հետևել է նաև, որ դրանք գնած դատապարտյալների խցերում խուզարկություններ չկատարվեն, մինչև հեռախոսների գումարները վճարելը: Գումարները Ա.Շամիրյանի կողմից ստանալուց հետո ՔԿ հիմնարկի պետի տեղակալի հանձնարարությամբ կատարված խուզարկությունների արդյունքում հեռախոսները առգրավվել են՝ հետագայում դրանց մշտական պահանջարկն ապահովելու համար:

Արմեն Շամիրյանն իր հերթին հանցագործության մասին նույնաբովանդակ հաղորդում է ներկայացրել:

Նկատի ունենալով, որ նյութերում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և դրա հետևանքով պետության ու կազմակերպությունների օրինական շահերին էական վնաս պատճառելու ենթադրաբար կատարված հանցավոր արարքի հատկանիշներ և հաշվի առնելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 188-րդ հոդվածի համաձայն նախաքննությունը պարտադիր է բոլոր գործերով, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 2-րդ մասի, 175-176-րդ, 180-182-րդ և 187-րդ հոդվածների պահանջներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու դեպքի առթիվ հարուցել քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:
2. Քրեական գործն ընդունել վարույթ և ձեռնամուխ լինել նախաքննության կատարմանը:
3. Որոշման պատճեններն ուղարկել Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցին և Արմեն Շամիրյանին:
4. Որոշման պատճենն ուղարկել դատախազին:

ՀՀ հատուկ քննչական ծառայության
հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ՝ Գ.Վ.Բեգոյան